# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՎԵԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Վեդի համայնք, ք.Վեդի, Թումանյան 6, Հեռ. (0234) 2-33-32, (0234) 2-37-71, Ֆաքս 0234 2 45 46, vedimeria@rambler.ru

N 426
*16 դեկտեմբեր 2016թ.*

*ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ*
*ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ*
*Ռ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ*

*Հարգելի պարոն Աբրահամյան.*

*Ձեզ է ուղարկվում Վեդու քաղաքային համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 9 հերթական նիստի որոշումները:*

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ* *ՎԱՐՈՒԺԱՆ ԲԱՐՍԵՂՅԱՆ*

*Կատ. ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Վ. Վարդանյան*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԵԴԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Վեդի քաղաքային համայնք
ք.Վեդի, Թումանյան 6, (0234) 2-33-32, (0234) 2-37-71 vedimeria@rambler.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

9 դեկտեմբերի 2016թվականի N 41

## *ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

***Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12 հոդվածով համայնքի ավագանին որոշում է.***

*Հաստատել ավագանու նիստի օրակարգը հետևյալ հարցերով և հաջորդականությամբ*

*1. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Վեդի համայնքում 2017թվականին մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների և վարձավճարների դրույքաչափերը սահմանելու մասին:*

*/Զեկ.Ա.Ավետիսյան/*

*2. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Վեդի համայնքում 2017թվականի համար տեղական հարկերի, տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը սահմանելու մասին:*

*/ Զեկ.Ա.Ավետիսյան/*

*3.Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Վեդի համայնքի ղեկավարին կից համայնքի տարածքում հասարակական կարգով գործող խորհրդակցական մարմիններ ձևավորելու մասին:*

*/Զեկ. Ա.Ավետիսյան/*

*4.Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Վեդու համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, Վեդու <քաղաքային կոմունալ ծառայության> և համայնքապետարանի ենթակայության համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:*

*/ Զեկ. Ա.Ավետիսյան/*

*Կողմ -10 դեմ -0 ձեռնպահ-0*

*Ա.ԱՎԱԳՅԱՆ*
*Ա.ԱՆԴՐՅԱՆ*
*Է.ԱԲՐԱՀԱՄՅԱՆ*
*Ա.ՍԱՖԱՐՅԱՆ*
*Ա.ՄՈՒՐԱԴՅԱՆ*
*Մ.ՄԵԼՔՈՆՅԱՆ*
*Դ.ՍԱՐՈՅԱՆ*
*Լ.ՄԱՆՈՒԿՅԱՆ*
*Ա.ՎԱՐԴԱՆՅԱՆ*
*Գ.ԽԱՉԱՏՐՅԱՆ*

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ* *ՎԱՐՈՒԺԱՆ ԲԱՐՍԵՂՅԱՆ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԵԴԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Վեդի քաղաքային համայնք
ք.Վեդի, Թումանյան 6, (0234) 2-33-32, (0234) 2-37-71 vedimeria@rambler.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

9 դեկտեմբերի 2016թվականի N 42

## *ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՎԵԴԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2017 ԹՎԱԿԱՆԻՆ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ ԵՎ ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 19-րդ կետով, համայնքի ավագանին որոշում է՝*

*1.Սահմանել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Վեդի համայնքի կողմից 2017 թվականին մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վարձավճարների դրույքաչափերը՝ համաձայն հավելված N 1 ։*

*2.Սահմանել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Վեդի համայնքի կողմից 2017 թվականին մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը՝ համաձայն հավելված N 2 ։*

*Կողմ -10 դեմ -0 ձեռնպահ-0*

*Ա.ԱՎԱԳՅԱՆ*
*Ա.ԱՆԴՐՅԱՆ*
*Է.ԱԲՐԱՀԱՄՅԱՆ*
*Ա.ՍԱՖԱՐՅԱՆ*
*Ա.ՄՈՒՐԱԴՅԱՆ*
*Մ.ՄԵԼՔՈՆՅԱՆ*
*Դ.ՍԱՐՈՅԱՆ*
*Լ.ՄԱՆՈՒԿՅԱՆ*
*Ա.ՎԱՐԴԱՆՅԱՆ*
*Գ.ԽԱՉԱՏՐՅԱՆ*

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ* *ՎԱՐՈՒԺԱՆ ԲԱՐՍԵՂՅԱՆ*

Հ ա վ ե լ վ ա ծ 1
Վեդի համայնքի ավագանու
2016թ դեկտեմբերի 9-ի թիվ 42 որոշ...

Դ ր ո ւ յ ք ա չ ա փ ե ր

*Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Վեդի համայնքի կողմից 2017թվականին մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների*

1. Համայնքային ենթակայության նախադպրոցական հաստատություններ հաճախող մեկ երեխայի ամսական վարձավճար սահմանել 5.000 դրամ

2 Վեդի համայնքում արտադպրոցական կրթադաստիարակչական ուսումնական հաստատություններ ըստ բաժինների ուսման ամսական վարձավճարներ սահմանել հետևյալ չափով.

## Երաժշտական դպրոց

| | |
|---|---|
| ա/ դաշնամուրի բաժնում | - 3000 դրամ |
| բ/ վոկալի բաժնում | - 3000 դրամ |
| գ/ կլարնետ | -3000դրամ |
| դ/ կիթառի բաժնում | - 2500 դրամ |
| ե/ ակորդեոն | -2500դրամ |
| զ/ ջութակ | -2500 դրամ |

է/ ժող. գործիքների բաժին հաճախող 15 երեխաների համար ապահովել անվճար ուսուցում, ում ծախսերը ֆինանսավորվում է պետական բյուջեից,

ժող. գործիքների բաժին հաճախող 15-ից ավել երեխաների համար սահմանել ամսական վարձավճար -2500դրամ

## Գեղարվեստի դպրոց

| | |
|---|---|
| ա/ նկարչություն | - 2500 դրամ |
| բ/ ժող.պարեր | - 2000 դրամ |
| գ/ փայտի գեղարվեստական փորագրություն | - 2000 դրամ |
| դ/ վարսահարդարներ | - 2000 դրամ |
| ե/ ընդհ. և սեղանի դիզայն | -2000դրամ |
| զ/ կիրառական արվեստներ | -1500դրամ |

Գեղարվեստի դպրոցի շախմատի խումբ հաճախող երեխաների համար ապահովել անվճար ուսուցում:

## Մարզադպրոց

ա/ բոլոր տեսակի մարզաձևերի համար - 500դրամ

3.Սահմանվում է համայնքի բնակիչների համար արտոնություններ և զեղչեր.

ա/ Երաժշտական դպրոցում վոկալի և այլ բաժնի նույն երեխայի հաճախելու դեպքում վոկալի համար սահմանել 100% արտոնություն, բացառությամբ ժող գործիքների բաժնի:

բ/ Մանկապարտեզներ համայնքապետարանի ենթակա մյուս հիմնարկներ հաճախող երկողմանի ծնողազուրկ երեխաների համար սահմանել արտոնության 100% չափով:

գ/ Մանկապարտեզներ համայնքապետարանի ենթակա մյուս հիմնարկներ հաճախող միակողմանի ծնողազուրկ երեխաների համար սահմանել արտոնության 50% չափով:

դ/ Խնամքին 4 և ավելի նախադպրոցական և դպրոցական տարիքի երեխաներ ունեցող ընտանիքների համար մանկապարտեզներում ծնողական գումարի նկատմամբ մեկ երեխայի համար սահմանել արտոնության 100% չափով:

ե/ Մանկապարտեզներ և քաղաքապետարանի ենթակա մյուս հիմնարկներ մեկ ընտանիքից երեք և ավելի հաճախող երեխաների դեպքում մեկ երեխայի համար սահմանել լրացուցիչ 100% արտոնություն:

Աշխատակազմի քարտուղար՝ Վ. Վարդանյան

Հավելված 2

## ՎԵԴԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ 2017Թ. ՀԱՄԱՐ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

| | | |
|---|---|---|
| 1 | Համայնքի տարածքում անշարժ գույքի օբյեկտներին նոր հասցե տրամադրելու համար | 1000 |
| 2 | Վեդու քաղաքապետարանի կողմից այլ համայնքի բնակիչներին մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճար /տեղեկատվության տրամադրում, գրանցում/, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենք 60 հոդված/ | 1000 |
| 3 | Բազմաբնակարան բնակելի շինության պահպանման պարտադիր նորմերի կատարումը ապահովելու նպատակով՝ շինության նկատմամբ սեփականության իրավունք ունեցող անձանց զբաղեցրած ընդհանուր մակերեսի յուրաքանչյուր քառ. մետրի համար սահմանել | 5 |

*Աշխատակազմի քարտուղար՝* [signature] *Վ. Վարդանյան*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԵԴԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Վեդի քաղաքային համայնք
ք.Վեդի, Թումանյան 6, (0234) 2-33-32, (0234) 2-37-71 vedimeria@rambler.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

9 դեկտեմբերի 2016թվականի N 43

*ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՎԵԴԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՀԱՐԿԵՐԻ, ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ ՈՒ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 18-րդ կետով,«Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ 8-րդ, 10-րդ,11-րդ հոդվածներով, համայնքի ավագանին որոշում է՝*

*1 .Սահմանել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Վեդի համայնքում 2017 թվականի համար տեղական հարկերի, տուրքերի տեսակները՝ համաձայն հավելված N 1:*

*2.Սահմանել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Վեդի համայնքում 2017 թվականի համար տեղական հարկերի, տուրքերի դրույքաչափերը համաձայն հավելված N2 :*

*3.Սահմանել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Վեդի համայնքում 2017 թվականի համար տեղական վճարների տեսակները՝ համաձայն հավելված N 3:*

*4.Սահմանել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Վեդի համայնքում 2017 թվականի համար տեղական վճարների դրույքաչափերը համաձայն հավելված N4 :*

*Կողմ -10 դեմ -0 ձեռնպահ-0*

*Ա.ԱՎԱԳՅԱՆ*
*Ա.ԱՆԴՐՅԱՆ*
*Է.ԱԲՐԱՀԱՄՅԱՆ*
*Ա.ՍԱՖԱՐՅԱՆ*
*Ա.ՄՈՒՐԱԴՅԱՆ*
*Մ.ՄԵԼՔՈՆՅԱՆ*
*Դ.ՍԱՐՈՅԱՆ*
*Լ.ՄԱՆՈՒԿՅԱՆ*
*Ա.ՎԱՐԴԱՆՅԱՆ*
*Գ.ԽԱՉԱՏՐՅԱՆ*

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ* *ՎԱՐՈՒԺԱՆ ԲԱՐՍԵՂՅԱՆ*

Հավելված 1
ՀՀ Արարատի մարզի Վեդի համայնքի ավագանու
2016թ.դեկտեմբերի 9-ի թիվ 43(Ն) որոշման

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՎԵԴԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Վեդի համայնքում սահմանվում է տեղական տուրքերի հետևյալ տեսակները՝

1. համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների (այդ թվում՝ ոչ հիմնական) շինարարության, վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, բարեկարգման աշխատանքները (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) իրականացնելու նպատակով շինարարության թույլտվության, իսկ ոչ հիմնական շինությունների մասով՝ տեղադրման թույլտվության համար.
2. համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույտվության համար.
3. համայնքի տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի, իսկ հանրային սննդի և զվարճանքի օբյեկտներում՝ ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի իրացման թույլտվության համար.
4. համայնքի տարածքում բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար.
5. համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, բաղնիքներին (սաունաներին) և խաղատներին ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար.
6. համայնքային կանոններին համապատասխան համայնքի տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար.
7. համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար.
8. համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար.
9. համայնքի տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար.
10. համայնքի տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար.
11. համայնքի տարածքում գտնվող խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար.
12. համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար.
13. համայնքի անվանումը ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար.
14. համայնքի տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայություններ իրականացնելու և (կամ) մատուցելու թույլտվության համար.

**Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար՝** [signature] **Վ. Վարդանյան**

Հավելված 2

## /ՎԵԴԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ և ՎՃԱՐՆԵՐԻ 2017թ-Ի ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ/

| Հ/հ | | Տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը | ավագանու կողմից սահմ.դրույք.սահ մաճ. /դրամ/ |
|---|---|---|---|
| 1 | | հիմնական օբյեկտների համար՝ | |
| | ա/ | Մինչև 300 ք/մ ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 ք/մ ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար | 15000 |
| | բ/ | սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝ | |
| | բա/ | 201-ից մինչև 500 ք/մ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար | 30000 |
| | բբ/ | 501-ից մինչև 1000 ք/մ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար | 40000 |
| | բգ/ | 1001 -ից մինչև 3000ք/մ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար | 50000 |
| | բդ/ | 3001 ք/մ և ավելի ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար | 100000 |
| | | ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝ | |
| | գ/ | մինչև 20 ք/մ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար | 3000 |
| | դ/ | 20 և ավել ք/մ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար | 5000 |
| 2 | | Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների քաղաքաշինական այլ օբյետտների վերակառուցման,ուժեղացման, վերականգնման, արդիականացման, աշխատանքների համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝ | |
| | ա/ | չի նախատեսվում կցակառույցների , վերակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխության համար | 3000 |
| | բ/ | բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնվող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքների գործառնական նշանակության փոփոխություն, ապա, բայց սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքների գործառնական նշանակության փոփոխության մասով. | 18000 |
| | գ/ | նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառնական նշանակություն փոփոխություն, ապա,այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն բաժնի սահմանված նորմերը: | 15000 |
| 3 | | Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է | 5000 |
| 4 | | Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանել | |
| | 4,1 | ոգելից և ալկահոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ | |
| | ա. | մինչև 26 քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ | 3500 |
| | բ. | 26-ից մինչև 50 քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ | 4500 |
| | գ. | 51-ից մինչև 100 քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ | 5500 |

| Հ/հ | Տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը | | ավագանու կողմից սահմ.դրույք.սահման. /դրամ/ |
|---|---|---|---|
| | դ. | 101-ից մինչև 200 քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ | 8000 |
| | ե. | 201-ից մինչև 500 քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ | 10000 |
| | զ. | 501 և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ | 15000 |
| | 4,2 | ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար | |
| | ա. | մինչև 26 քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ | 4500 |
| | բ. | 26-ից մինչև 50 քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ | 5500 |
| | գ. | 51-ից մինչև 100 քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ | 6500 |
| | դ. | 101-ից մինչև 200 քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ | 8000 |
| | ե. | 201-ից մինչև 500 քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ | 10000 |
| | զ. | 501 և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ | 15000 |
| 5 | Համայնքի տարածքում | | |
| | ա/ | Բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա՝ մեկ քառակուսի մետրի համար | 50 |
| | բ/ | Հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և սեղմված բնական կամ հեղուկացված նավթային | 150000 |
| | գ/ | խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է | 35000 |
| | գա/ | համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանել | |
| | | Հիմնական շինությունների ներսում | |
| | ա. | մինչև 26 քմ ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար | 4000 |
| | բ. | 26 մինչև 50 քմ ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար | 6000 |
| | գ. | 51 մինչև 100քմ ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար | 8000 |
| | դ. | 101 մինչև 200 քմ ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար | 10000 |
| | ե. | 201 մինչև 500 քմ ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար | 15000 |
| | զ. | 501 և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար | 20000 |
| | | Ոչ հիմնական շինությունների ներսում | |
| | ա. | մինչև 26 քմ ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար | 2000 |
| | բ. | 26 մինչև 50 քմ ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար | 3000 |
| | գ. | 51 մինչև 100քմ ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար | 4000 |
| | դ. | 101 մինչև 200 քմ ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար | 5000 |
| | ե. | 201 մինչև 500 քմ ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար | 7500 |
| | զ. | 501 և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար | 10000 |
| | 5,1 | Համայնքի տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար | 50000 |

| </h | | Տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը | ավագանու կողմից սահմ.դրույք.սահման. /դրամ/ |
|---|---|---|---|
| 6 | | Համայնքի տարածքում՝ առևտրի հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպմա օբյեկտները, բաղնիքները /սաունաները/, խաղատները ժամը 24:00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ | |
| | ա/ | Առևտրի օբյեկտների համար | 25000 |
| | բ/ | Հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար | 50000 |
| | գ/ | Բաղնիքների/սաունաների/համար | 200000 |
| | դ/ | Խաղատների կազմակերպման համար | 500000 |
| | ե/ | Շահումով խաղերի կազմակերպման համար | 250000 |
| | զ/ | Վիճակախաղերի կազմակերպման համար | 100000 |
| 7 | | Ընտանի կենդանիներ պահելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է | 0 |
| 8 | | Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ ք/մ տեղական տուրքը սահմանվում է | |
| | ա/ | ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար | 1000 |
| | բ/ | թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար | 2500 |
| | գ/ | այլ արտաքին գովազդի համար | 800 |
| | դ/ | մինչև 2006թվականի հոկտեմբերի 1-ը՝ ծխախոտի արտաքին գովազդի համար | 3000 |
| | ե/ | սոցիալական գովազդի համար | 0 |
| | 8,1, | համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդի դատարկ գովազդային վահանակների 1 քմ մետրի դիմաց սահմանվում է տեղական տուրք՝ տվյալ համայնքում օրենքով նախատեսված կարգով այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25%-ի չափով | 200 |
| | 8,2, | եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը,ապա համապատասխան բյուջե պետք է վճարի յուրաքանչյուր քմ համար օրենքով նախատեսված կարգով տվյալ համայնքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլատվության համար սահմանված տուրքի 10-%-ը՝այդ գովազդի մակերեսին համապատասխան | 80 |
| 9 | | Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճենների և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է | 2000 |
| | | ՀՀ համայնքների անվանումները ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել | 50000 |
| 10 | | Համայնքի տարածքում մարդատար տաքսու ծառայություններ /բացառությամբ երթուղային տաքսիների/ իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է | 10000 |
| 10,1 | | Համայնքի տարածքում քաղաքացիական հոգեհանգստի /հրաժեշտի/ ծիսակատարությունների ծառայությունների իրականացնելու և /կամ/ մատուցելու թույլտվության համար | 100000 |

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Վ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

[illegible]

[illegible]

Հավելված 4

## ՎԵԴԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ 2017թ. ՀԱՄԱՐ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

| | | |
|---|---|---|
| 1 | ա) Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար | 4000դրամ |
| 2 | բ) Տեղական ինքնակառավարման մարմինների տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար՝տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար | 1000դրամ |
| 3 | գ) Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար՝ մասնակիցներից վճար | 3000դրամ |
| 4 | Աղբահանության վճարի դրույքաչափեր | |
| | ա/ կենցաղային աղբի համար՝ յուրաքանչյուր բնակչի հաշվով ամսական | 150 դրամ |
| | բ/ արտադրական,արդյունաբերական, առևտրային, գրասենյակային և այլ կազմակերպությունների համար աղբահանության վճար սահմանել ամսեկան՝ կիրառելով կցված հավելված 5-ով նախատեսված գործակիցները | 2500դրամ |
| 5 | շինարարական և խոշոր եզրչափի աղբի հավաքման և փոխադրման համար տեղական ինքնակառավարման մարմինների կողմից տրամադրվող թույլտվության վճար սահմանել՝ մեկ տոննայի համար | 2000դրամ |

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ [signature] Վ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Հավելված - 5

Վեդուքաղաքայինհամայնքիավագանու

9 դեկտեմբերի 2016 թ 43 որոշման

Կիրառվող մեթոդները

ՀՀ Արարատի մարզի Վեդու քաղաքային համայնքում գտնվող կազմակերպությունների և օբյեկտների կենցաղային աղբի աղբահանության սահմանված վարձավճարի համար կիրառվող գործակիցները

| N | Աղբառաջացմանօբյեկտ /անձ/կամգործունեությանտեսակ | Առաջացածաղբիաղբահեռացմանհամարսահմանվածգործակիցներ /ամիս/խմ/ |
|---|---|---|
| 1 | Կրպակներ | |
| Ա | մինչև 10քմ առևտայինմակերես | 0.4 |
| Բ | 10-20քմ առևտրայինմակերես | 0.8 |
| 2 | Մթերայինխանութներ | |
| ա | մինչև 20քմ առևտայինմակերես | 0.4 |
| բ | 20-40քմ առևտրայինմակերես | 0.8 |
| գ | 40-70 առևտրայինմակերես | 1.2 |
| դ | 70-100 քմառևտրայինմակերես | 1.6 |
| ե | 100 քմավելիառևտրայինմակերես | 2 |
| 3 | Հագուստիխանութներ | |
| ա | մինչև 30քմ առևտրայինմակերես | 0.4 |
| բ | 30-50քմ առևտրայինմակերես | 0.8 |
| գ | 50-80 քմառևտրայինմակերես | 1.2 |
| դ | 80-100 քմառևտրայինմակերես | 1.6 |
| ե | 100 քմ – իցավելիառևտրայինմակերես | 2 |
| 4 | Կենցաղային, տնտեսական և արդյունաբերականապրանքներիխանութներ | |
| ա | մինչև 50 քմառևտրայինմակերես | 1.0 |
| բ | 50-100 քմառևտրայինմակերես | 1.4 |
| գ | 100 քմ- իցավելիառևտրայինմակերես | 1,8 |
| 5 | Ավտոտեխսպասարկմանկայաններ | |
| ա | մինչև 50քմ մակերես | 0.4 |
| | [illegible] | [illegible] |

| | | |
|---|---|---|
| գ | 100 քմ-իցավելիմակերես | 1.2 |
| 6 | Բենզալիցքավորմանկայաններ | |
| ա | 1-2 լիցքավորմանսարք | 0.8 |
| բ | 3 և ավելիլիցքավորմանսարք | 1.2 |
| 7 | Վարսավիրանոցներ, գեղեցկությանսրահեր | |
| ա | մինչև 20քմ մակերես | 0.4 |
| բ | 20-50 քմմակերես | 0.8 |
| գ | 50 քմ-իցավելիմակերես | 1.2 |
| 8 | Հանրայինսննդիօբյեկտներ | |
| ա | մինչև 50 քմմակերես | 1.0 |
| բ | 50-100 քմմակերես | 1,8 |
| գ | 100 քմ-իցավելիմակերես | 2,6 |
| դ | մինչև 10 սեղան | 1,6 |
| ե | 10-15 սեղան | 2,4 |
| զ | 15-ից ավելիսեղան | 3,2 |
| 9 | Դեղատներ | |
| ա | մինչև 30 քմմակերես | 0,4 |
| բ | 30-60 քմմակերես | 0,8 |
| գ | 60 քմ-իցավելիմակերես | 1,2 |
| 10 | Գրասենյակներ, օֆիս | |
| ա | մինրև 40 քմմակերես | 0,4 |
| բ | 60-100 քմմակերես | 0,8 |
| գ | 100-150 քմմակերես | 1,2 |
| դ | 150 քմ-իցավելիմակերես | 3,0 |
| 11 | Բուժ. հիմնարկներ | |
| 1 | հիվանդանոցներ և կլինիկաներ | |
| ա | մինչև50 մահճակալ | 3,2 |
| բ | 50-100 մահճակալ | 4 |
| գ | 100 և ավելիմահճակալներ | 4,8 |
| 2 | Ատամնաբուժարաններ | |
| ա | մինչև 2 սպասարկմանաթոռ | 0,8 |
| բ | 2-4 սպասարկմանաթոռ | 1,2 |
| գ | 4 և ավելիսպասարկմանաթոռ | 1,6 |
| 12 | Հանրակրթականդպրոցներ , վարժարաններ , սպորտդպրոցներ, երաժշտականդպրոցներ | |
| ա | 1 անձիհամար | 0,008 |
| 13 | Նախադրոցականուսումնականհաստատություններ | |
| ա | 1 անձիհամար | 0,032 |
| 14 | Համալսարաններ, ինստիտուտներ, քոլեջներ | |
| ա | 1 անձիհամար | 0,016 |
| 15 | Հյուրանոցներ | |
| ա | մինչև 10 սենյակ /համար/ | 1,2 |
| բ | 10-30 սենյակ | 2 |
| գ | 30- և ավելիսենյակ | 3,2 |
| 1 | Բանկեր | |

| | | |
|---|---|---|
| 6 | | |
| ա | մինչև 50 քմմակերես | 1,2 |
| բ | 50-100 քմմակերես | 1,6 |
| գ | 100 քմ և ավելմակերես | 2 |
| 17 | Թանգարաններ, պատկերասրահներ, ցուցահանդեսներ | 0.8 |
| 18 | Բնակչությանկկենցաղսպասարկմանծառայություններ /ատելյեներ, ֆոտոատելյեներ, համակարգչայիննինտերնետծառայություններ/ | |
| ա | մինչև 20 քմմակերես | 0,4 |
| բ | 20-50 քմմակերես | 0,8 |
| գ | 50-80 քմմակերես | 1,2 |
| դ | 80-ից ավելքմմակերես | 2 |
| 19 | Ծաղկիվաճառքիխանութներ և սրահներ | |
| ա | մինչև 20 քմմակերես | 0,4 |
| բ | 20-50 քմմակերես | 0,8 |
| գ | 50-100 քմմակերես | 1,2 |
| դ | 100 ավելքմմակերես | 1,6 |
| 20 | Առևտրիժամանակավոր և շարժականկետեր | 0.4 |
| 21 | Շուկաներ | |
| ա | մինչև 200 քմմակերես | 1,2 |
| բ | 200 ավելքմմակերես | 2 |
| 22 | Արտադրամասեր | |
| ա | մինչև 200 քմմակերես | 2 |
| բ | 200 քմավելմակերես | 2,8 |
| 23 | Սննդիարտադրություն | |
| ա | մինչև 100 քմմակերես | 1,2 |
| բ | 100-200 քմմակերես | 1,6 |
| գ | 200 քմ և ավելիմակերես | 2 |
| 24 | Գազալցակայաններ | |
| ա | մինչև 2 լիցքավորմանսարք | 1,2 |
| բ | 2-ից ավելիլիցքավորմանսարք | 2 |
| 25 | Տաքսիծառայություններ | |
| ա | մինչև 10 քմմակերես | 0,8 |
| բ | 10-30 քմմակերես | 1,2 |
| գ | 30-և ավելիքմմակերես | 1,6 |
| 26 | Այլհիմնարկ ձեռնարկություններ | |
| ա | 1 անձի համար | 0,1 |

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Վ.ՎԱՐԴԱՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԵԴԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Վեդի քաղաքային համայնք
ք.Վեդի, Թումանյան 6, (0234) 2-33-32, (0234) 2-37-71 vedimeria@rambler.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

9 դեկտեմբերի 2016թվականի N 44

*ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՎԵԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԿԻՑ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳՈՎ ԳՈՐԾՈՂ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ ՁԵՎԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 34-րդ կետով և 54.1 հոդվածի 1-ին և 3-րդ մասերով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածով. համայնքի ավագանին որոշում է՝*

*1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Վեդի համայնքի ղեկավարին կից, համայնքի տարածում հասարակական կարգով գործող խորհրդակցական մարմինների քանակը, անվանումները և ձևավորման կարգը՝ համաձայն հավելված N 1:*

*2. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Վեդի համայնքի ղեկավարին կից համայնքի տարածում հասարակական կարգով գործող խորհրդակցական մարմինների գործունեության կարգը՝ համաձայն հավելված N 2:*

*3. Ուժը կորցրած ճանաչել Վեդի քաղաքային համայնքի ավագանու 2015 թվականի հունիսի 9-ի « Վեդի համայնքի ղեկավարի կից, խորհուրդ ստեղծելու մասին » N16-Ն որոշումը:*

*Կողմ -10 դեմ -0 ձեռնպահ-0*

*Ա.ԱՎԱԳՅԱՆ*
*Ա.ԱՆԴՐՅԱՆ*
*Է.ԱԲՐԱՀԱՄՅԱՆ*
*Ա.ՍԱՖԱՐՅԱՆ*
*Ա.ՄՈՒՐԱԴՅԱՆ*
*Մ.ՄԵԼՔՈՆՅԱՆ*
*Դ.ՍԱՐՈՅԱՆ*
*Լ.ՄԱՆՈՒԿՅԱՆ*
*Ա.ՎԱՐԴԱՆՅԱՆ*
*Գ.ԽԱՉԱՏՐՅԱՆ*

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ* *ՎԱՐՈՒԺԱՆ ԲԱՐՍԵՂՅԱՆ*

Հավելված 1
ՀՀ Արարատի մարզի Վեդի համայնքի ավագանու
2016թ. Դեկտեմբերի9-ի թիվ(Ն) որոշման

# Կ Ա Ր Գ
# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՎԵԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԿԻՑ, ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳՈՎ ԳՈՐԾՈՂ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՔԱՆԱԿԻ, ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ

1. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Վեդի համայնքում տեղական ինքնակառավարմանը համայնքի բնակիչների, հասարակական կազմակերպությունների, միավորումների, հանրության մասնակցությունն ու իրազեկումը, ինչպես նաև տեղական ինքնակառավարման նկատմամբ հանրային վերահսկողությունը ապահովելու նպատակով Վեդի համայնքի ղեկավարին կից ստեղծվում և գործում են խորհրդակցական մարմիններ (այսուհետ՝ Խորհուրդ):
2. Վեդի համայնքի ղեկավարին կից ձևավորվում և գործում են հետևյալ երեք Խորհուրդները.
   1) համայնքի զարգացման հնգամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման
   2) Քաղաքաշինության,հողօգտագործման,տնտեսական ենթակառուցվածքների,կոմունալ տնտեսության,շրջակա միջավայրի պաշտպանության և տրանսպորտի հարցերի
   3) Կրթության,մշակույթի,երիտասարդության հետ տարվող աշխատանքների,առողջապահության,սպորտի,սոցիալական(այդ թվում՝ երեխաների պաշտպանության)հարցերի:
3. Յուրաքանչյուր Խորհուրդ ձևավորվում է 9 անդամից:
4. Խորհրդի անդամներին իր որոշմամբ նշանակում է Վեդի համայնքի ղեկավարը՝ աշխատակազմի, համայնքային կազմակերպությունների համապատասխան մասնագետների ընդգրկմամբ, ինչպես նաև հասարակական հիմունքներով համայնքի բնակիչների և այլ շահագրգիռ անձանց ներգրավմամբ (վերջիններիս համաձայնությամբ): Խորհրդի կազմում ներգրավում են.
   1) Վեդի համայնքապետարանի աշխատակազմից 3 անդամ,
   2) համայնքի ավագանիներից՝ 2 անդամ,
   3) 1 փորձագետ՝ տվյալ բնագավառի մասնագիտական գիտելիքներ և բարձր որակավորում ունեցող, ցանկալի է հայտնի ու հեղինակություն վայելող այն անձանցից, որոնք չեն աշխատում պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններում կամ դրանց ենթակայության կազմակերպություններում և նախապես հայտնել են իրենց համաձայնությունը:
5. Հասարակական հիմունքներով համայնքի բնակիչների և այլ շահագրգիռ 3 անձանց նշանակումը Խորհրդի կազմում կատարվում է իրենց դիմումի համաձայն՝ հրապարակային հայտարարության հիման վրա, ըստ հայտերի ներկայացման հաջորդականության՝ մինչև սույն կարգով սահմանված անդամների առավելագույն քանակը լրանալը:
6. Խորհուրդը ձևավորված է համարվում, եթե նշանակվել են տվյալ Խորհրդի առնվազն 6 անդամ:

**Աշխատակազմի քարտուղար՝** **Վ. Վարդանյան**

*Հավելված 2*
ՀՀ Արարատի մարզի Վեդի համայնքի ավագանու
2016թ. դեկտեմբերի 9-ի թիվ 44-Ն որոշման

# ԿԱՐԳ
# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՎԵԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԿԻՑ, ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳՈՎ ԳՈՐԾՈՂ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

1. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Վեդի համայնքի ղեկավարին կից, համայնքի տարածքում հասարակական կարգով գործող խորհրդակցական մարմինը (այսուհետ՝ Խորհուրդ) իր գործունեությունն իրականացնում է օրենքների և այլ իրավական ակտերի, ինչպես նաև սույն կարգի հիման վրա:
2. Խորհրդի խնդիրներն են.
   1) համայնքի բնակիչների, հասարակական կազմակերպությունների, միավորումների, ինչպես նաև քաղաքացիական հասարակության այլ ինստիտուտների ներգրավմամբ տվյալ ոլորտում հանրային կարևորության խնդիրների վերհանումը, դրանց վերաբերյալ կարծիքի (առաջարկ, եզրակացություն) տրամադրումը Վեդի համայնքի ղեկավարին,
   2) համայնքի բնակիչների, քաղաքացիների, հասարական կազմակերպությունների, միավորումների առաջարկությունների ուսումնասիրումը, քննարկումը և դրանց վերլուծության հիման վրա կարծիքի (առաջարկ, եզրակացություն) տրամադրումը Վեդի համայնքի ղեկավարին,
   3) տվյալ ոլորտի կառավարման նկատմամբ հասարակական վերահսկողության իրականացումը:
3. Խորհրդի աշխատանքները իրականացվում են նիստերի միջոցով, որոնք հրավիրվում են Խորհրդի նախագահի կողմից:
4. Խորհուրդը նախագահում է Վեդի համայնքի ղեկավարը, որի առաջարկությամբ Խորհրդի կազմից ընտրվում է Խորհրդի նախագահի տեղակալ ու քարտուղար՝ ձայների պարզ մեծամասնությամբ, որոնք կարող են լինել համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցներ:
5. Խորհուրդն իր նիստերը կազմակերպում է Վեդի համայնքապետարանի շենքում Թումանյան 6 հասցեում:
6. Խորհրդի անդամների համաձայնությամբ Խորհրդի նիստերին խորհրդակցական ձայնի իրավունքով կարող են մասնակցել նաև այլ անձինք (հրավիրվածներ), ինչպես նաև զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչներ:
7. Խորհրդի բնականոն գործունեությունն ապահովում է Վեդի համայնքի ղեկավարը:
8. Խորհրդի նախագահը՝
   1) հաստատում է Խորհրդի նիստի օրակարգը,
   2) հրավիրում է Խորհրդի նիստերը,
   3) կազմակերպում է Խորհրդի գործունեությունը և ղեկավարում դրա աշխատանքը,
   4) ստորագրում է Խորհրդի նիստի արձանագրությունը:
9. Խորհրդի նախագահի տեղակալը փոխարինում է Խորհրդի նախագահին նր բացակայության ժամանակ:
10. Խորհրդի քարտուղարը՝
    1) կազմում է նիստի օրակարգը և ներկայացնում Խորհրդի նախագահի հաստատմանը,

2) իրականացնում է նիստերի օրակարգում ընդգրկված հարցերի նախապատրաստումը և նիստից երկու աշխատանքային օր առաջ դրանք տրամադրում է Խորհրդի անդամներին ու ապահովում է մասնակիցների ներկայությունը,
3) պատասխանատվություն է կրում ներկայացվող նյութերի ամբողջականության համար,
4) վարում է Խորհրդի գործավարությունը, այդ թվում՝ նիստի արձանագրության կազմումը:

11. Խորհրդի անդամը նախագահողի կողմից կարող է հեռացվել խորհրդի տվյալ նիստից խորհրդի նիստի աշխատանքներին խոչընդոտելու դեպքում, մասնավորապես եթե.
    1) թույլ չի տալիս կամ խոչընդոտում է Խորհրդի մյուս անդամներին ազատորեն արտահայտել իրենց կարծիքը քննարկվող հարցի վերաբերյալ,
    2) առանց ձայնի իրավունք ստանալու արտահայտում է իր կարծիքը կամ խոչընդոտում է նիստի աշխատանքին:
12. Խորհրդի նիստերը գումարվում են առնվազն երեք ամիսը մեկ անգամ:
13. Խորհրդի նիստն իրավազոր է, եթե նիստին ներկա են նշանակված անդամների առնվազն կեսը:
14. Խորհրդի որոշումներն ընդունվում են եզրակացությունների և առաջարկությունների ձևով և կրում են խորհրդատվական բնույթ:
15. Խորհրդի անդամներն անձամբ մասնակցում են Խորհրդի նիստերին:
16. Խորհուրդն՝ ընդհանրական կարծիքի ձևավորման համար, քննարկվող հարցերի շուրջ որոշումներ է ընդունում բաց քվեարկությամբ՝ ներկա մասնակիցների ձայների մեծամասնությամբ, բայց ոչ պակաս, քան Խորհրդի անդամների ընդհանուր թվի մեկ երրորդից ավելիի կողմից ընդունվելու դեպքում:
17. Խորհրդի յուրաքանչյուր անդամ իրավունք ունի օրակարգ մտցնել լրացուցիչ հարցեր, եթե դրանք ընդունվում են քվեարկությամբ՝ տվյալ նիստին ներկա խորհրդի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:
18. Խորհրդի աշխատանքների վերաբերյալ տեղեկատվությունը հրապարակվում է Վեդու համայնքապետարանի պաշտոնական համացանցային կայքում:
19. Խորհրդի անդամ կարող է լինել համայնքի բնակիչ համարվող 16 տարին լրացած յուրաքանչյուր անձ:
20. Խորհրդի անդամ չեն կարող լինել՝
    1) դատական կարգով անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչված անձինք,
    2) հանցագործության համար դատապարտված անձինք, որոնց դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չէ:
21. Խորհրդի անդամի լիազորությունները դադարեցվում են տվյալ անձին համապատասխան Խորհրդի կազմից հանելու մասին Վեդի համայնքի ղեկավարի որոշմամբ, եթե Խորհրդի անդամը՝
    1) դիմում է ներկայացրել Խորհրդից դուրս գալու վերաբերյալ,
    2) դատական կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ,
    3) երեք անգամ անընդմեջ, անհարգելի պատճառով չի մասնակցել Խորհրդի նիստերի աշխատանքին,
    4) տառապում է այնպիսի հիվանդությամբ, որը կարող է խոչընդոտել նրա լիազորությունների իրականացմանը Խորհրդում,
    5) նրա նկատմամբ կա դատարանի օրինական ուժի մեջ մտած մեղադրական դատավճիռ,
    6) նա մահացել է,
    7) անձը դադարել է ավագանու անդամ լինելուց:

**Աշխատակազմի քարտուղար՝** **Վ. Վարդանյան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԵԴԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Վեդի քաղաքային համայնք
ք.Վեդի, Թումանյան 6, (0234) 2-33-32, (0234) 2-37-71 vedimeria@rambler.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

9 դեկտեմբերի 2016թվականի N 45

*ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՎԵԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ՎԵԴՈՒ <ՔԱՂԱՔԱՅԻՆ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ> ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՅՈՒՅԱԿՆԵՐԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻ*

*Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 26-րդ կետերով և 32-րդ հոդվածի 1-ին մասով , <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածով համայնքի ավագանին որոշում է.*

*1. Հաստատել Վեդու համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը՝ համաձայն հավելված 1-ի:*

*2.Հաստատել Վեդու համայնքապետարանի աշխատակազմի <Քաղաքային կոմունալ ծառայության>համայնքի ենթակայության համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելված 2-ի:*

*3. ՈՒժը կորցրած ճանաչել Վեդի քաղաքային համայնքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 17-ի « Վեդու քաղաքապետարանի աշխատակազմի և ՀՈԱԿ-ների,Վեդու քաղաքային կոմունալ ծառայության աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին » N47-Ա որոշումը:*

*4. Որոշումն ուժի մեջ է մտնում 2017 թվականի հունվարի 1-ից:*

*Կողմ -10 դեմ -0 ձեռնպահ-0*

*Ա.ԱՎԱԳՅԱՆ*
*Ա.ԱՆԴՐՅԱՆ*
*Է.ԱԲՐԱՀԱՄՅԱՆ*
*Ա.ՍԱՖԱՐՅԱՆ*
*Ա.ՄՈՒՐԱԴՅԱՆ*
*Մ.ՄԵԼՔՈՆՅԱՆ*
*Դ.ՍԱՐՈՅԱՆ*
*Լ.ՄԱՆՈՒԿՅԱՆ*
*Ա.ՎԱՐԴԱՆՅԱՆ*
*Գ.ԽԱՉԱՏՐՅԱՆ*

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ* *ՎԱՐՈՒԺԱՆ ԲԱՐՍԵՂՅԱՆ*

Հավելված

ՀՀ Արարատի մարզի Վեդի համայնքի ավագանու

2016թ. Դեկտեմբերի 9-ի թիվ 45 որոշման

# ԿԱՌՈՒՑՎԱԾՔ

## ՎԵԴԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

*Ֆինանսատնտեսական բաժին*

*Եկամուտների հավաքագրման, սպասարկման, գյուղատնտեսության և բնապահպանության բաժին*

*Ընդհանուր բաժին*

*Ներքին աուդիտի բաժին*

*Առանձնացված ստորաբաժանումներ*

*ՔԿԱԳ տարածքային բաժին*

*Աշխատակազմի քարտուղար* Վ. Վարդանյան

## ՎԵԴՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Աշխատակիցների թվաքանակը՝ 32 «2017թ.»
2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

| ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ | ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ |
|---|---|---|
| Համայնքի ղեկավարը | 1 | 260 000 |
| Համայնքի ղեկավարի տեղակալ | 1 | 190 000 |
| Համայնքի ղեկավարի խորհրդական | 1 | 120 000 |
| ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐ | | |
| Աշխատակազմի քարտուղար | 1 | 160 000 |
| ՔԿԱԳ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺԻՆ | | |
| Տարածքային բաժնի պետ | 1 | 256 620 |
| Տարածքային բաժնի 1-ին կարգի մասնագետ | 1 | 133 600 |
| ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱԺԻՆ | | |
| Բաժնի պետ | 1 | 140 000 |
| Գլխավոր մասնագետ –հաշվապահ | 1 | 110 000 |
| Առաջատար մասնագետ | 3 | 100 000 |
| Ընդամենը | 5 | |
| ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՄԱՆ, ՍՊԱՍԱՐԿՄԱՆ, ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ | | |
| Բաժնի պետ | 1 | 140 000 |
| Գլխավոր մասնագետ | 1 | 110 000 |
| Առաջատար մասնագետ | 3 | 100 000 |
| 1-ին կարգի մասնագետ | 1 | 90 000 |
| Ընդամենը | 6 | |
| ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺԻՆ | | |
| Բաժնի պետ | 1 | 140 000 |
| Գլխավոր մասնագետ | 1 | 110 000 |
| Առաջատար մասնագետ | 2 | 100 000 |
| 1-ին կարգի մասնագետ | 1 | 90 000 |
| Ընդամենը | 5 | |
| ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏ ԲԱԺԻՆ | | |
| Բաժնի պետ | 1 | 140 000 |
| | | 140.000 |

| ԱՇԽԱՏԱԿԱԶՄ | | |
|---|---|---|
| Գլխավոր մասնագետ - ճարտարապետ | 1 | 110 000 |
| Գլխավոր մասնագետ | 2 | 110 000 |
| Առաջատար մասնագետ | 1 | 100000 |
| Ընդամենը | 4 | |

| ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄ | | |
|---|---|---|
| Համակարգչային օպերատոր | 1 | 90 000 |
| Վարչական շենքի հավաքարար | 1.5 | 90 000 |
| Վարորդ | 1 | 90 000 |
| Պարետ | 1 | 90 000 |
| Վարչական շենքի պահակ | 1 | 73 000 |
| Ընդամենը | 5 | |

Աշխատակազմի քարտուղար [signature] Վ. Վարդանյան

[illegible]

[illegible]

# ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿ

«ՎԵԴՈՒ ԹԻՎ 1 ՄԱԿԱՊԱՐՏԵԶ» ՀՈԱԿ 2017Թ.

| Հ/h | Պաշտոնը | Հաստիքային միավոր | Դրույքաչափ | |
|---|---|---|---|---|
| 1 | Տնօրեն | 1 | 120000 | 120000 |
| 2 | Ավագ դաստիարակ | 0,75 | 80000 | 60000 |
| 3 | Հաշվապահ | 1 | 78000 | 78000 |
| 4 | Տնտեսվար | 1 | 78000 | 78000 |
| 5 | Գործավար | 1 | 78000 | 78000 |
| 6 | Բուժքույր | 1 | 78000 | 78000 |
| 7 | Դաստիարակ | 4 | 80000 | 320000 |
| 8 | Երաժշտական դաստիարակ | 1 | 80000 | 80000 |
| 9 | Պարուսույց | 0,5 | 80000 | 40000 |
| 10 | Ֆիզ.հրահանգիչ | 0,5 | 80000 | 40000 |
| 11 | Դաստիարակի օգնական | 3 | 73000 | 219000 |
| 12 | Դաստիարակի օգնական | 1 | 78000 | 78000 |
| 13 | Խոհարար | 0,75 | 73000 | 54750 |
| 14 | Խոհարարի օգնական | 0,75 | 73000 | 54750 |
| 15 | Լվացքարար | 0,75 | 78000 | 58500 |
| 16 | Պահակ | 1 | 78000 | 78000 |
| 17 | Այգեպան | 0,5 | 78000 | 39000 |
| 18 | Օժանդակ բանվոր | 0,75 | 73000 | 54750 |
| 19 | Դռնապահ | 0,25 | 73000 | 18250 |
| 20 | Դերձակ | 0,5 | 73000 | 36500 |
| | Ընդամենը | 21 | | 1663500 |

**Աշխատակազմի քարտուղար՝** Վ.Վարդանյան

ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿ

«ՎԵԴՈՒ ԹԻՎ 2 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» 2017Թ.

| Հ/հ | Պաշտոնը | Հաստիքային միավոր | Դրույքաչափ | |
|---|---|---|---|---|
| 1 | Տնօրեն | 1 | 120000 | 120000 |
| 2 | Ավագ դաստիարակ | 1 | 80000 | 80000 |
| 3 | Հաշվապահ | 1 | 78000 | 78000 |
| 4 | Գործավար | 1 | 78000 | 78000 |
| 5 | Տնտեսվար | 1 | 73000 | 73000 |
| 6 | Բուժքույր | 1 | 73000 | 73000 |
| 7 | Դաստիարակ | 4 | 80000 | 320000 |
| 8 | Երաժշտության դաստիարակ | 1 | 80000 | 80000 |
| 9 | ֆիզ. հրահանգիչ | 0,5 | 80000 | 40000 |
| 10 | Պարուսույց | 0,5 | 80000 | 40000 |
| 11 | Դաստիարակի օգնական | 4 | 73000 | 292000 |
| 12 | Խոհարար | 1,5 | 73000 | 109500 |
| 13 | Լվացքարար | 1 | 73000 | 73000 |
| 14 | Պահակ | 1 | 73000 | 73000 |
| 15 | Այգեպան | 0,5 | 73000 | 36500 |
| 16 | Օժանդակ բանվոր | 1 | 78000 | 78000 |
| 17 | Դռնապահ | 0,25 | 73000 | 18250 |
| 18 | Դերձակ | 0,5 | 73000 | 36500 |
| ***Ընդամենը*** | | 21,75 | | 1698750 |

Աշխատակազմի քարտուղար՝ Վ.Վարդանյան

Կրթության բաժնի պետ [signature] Ժ. Մարգարյան

Ֆինանսատնտեսական բաժնի պետ [signature] Հ. Հովհաննիսյան

# ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿ

«ՎԵԴՈՒ ԹԻՎ 3 ՄԱԿԱՊԱՐՏԵԶ» ՀՈԱԿ 2017Թ.

| Հ/հ | Պաշտոնը | Հաստիքային միավոր | Դրույքաչափ | |
|---|---|---|---|---|
| 1 | Տնօրեն | 1 | 120000 | 120000 |
| 2 | Ավագ դաստիարակ | 0,75 | 80000 | 60000 |
| 3 | Հաշվապահ | 1 | 78000 | 78000 |
| 4 | Տնտեսվար | 1 | 73000 | 73000 |
| 5 | Գործավար | 1 | 78000 | 78000 |
| 6 | Բուժքույր | 1 | 78000 | 78000 |
| 7 | Դաստիարակ | 4 | 80000 | 320000 |
| 8 | Երաժշտ. դաստիարակ | 1 | 80000 | 80000 |
| 9 | Պարուսույց | 0,5 | 80000 | 40000 |
| 10 | Ֆիզ. հրահանգիչ | 0,5 | 80000 | 40000 |
| 11 | Դաստիարակի օգնական | 4 | 73000 | 292000 |
| 12 | Խոհարար | 0,75 | 73000 | 54750 |
| 13 | Խոհարար | 0,75 | 78000 | 58500 |
| 14 | Լվացքարար | 0,75 | 73000 | 54750 |
| 15 | Պահակ | 1 | 78000 | 78000 |
| 16 | Այգեպան | 0,5 | 73000 | 36500 |
| 17 | Օժանդակ բանվոր | 0,75 | 73000 | 54750 |
| 18 | Դռնապահ | 0,25 | 78000 | 19500 |
| 19 | Դերձակ | 0,5 | 78000 | 39000 |
| | Ընդամենը | 21 | | 1654750 |

Աշխատակազմի քարտուղար Վ.Վարդանյան

## ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿ

«ՎԵԴՈՒ ԳԵՂԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ» ՀՈԱԿ 2017Թ.

| Հ/հ | Պաշտոնը | Հաստիքային միավոր | Դրույքաչափ | |
|---|---|---|---|---|
| 1 | Տնօրեն | 1 | 120000 | |
| 2 | Ուսմասվար | 1 | 73000 | |
| 3 | Հաշվապահ | 1 | 78000 | |
| 5 | Կազմակերպիչ | 1 | 73000 | |
| 6 | Գանձապահ | 1 | 78000 | |
| 7 | Մեթոդիստ | 0,5 | 78000 | |
| 8 | Գործավար/թանգ. պատ. | 1 | 73000 | |
| 9 | Մանակավարժ | 17 | 78000 | |
| 10 | Բուժքույր | 0,5 | 78000 | |
| 11 | Պահակ | 1 | 78000 | |
| 12 | Հավաքարար | 1,5 | 74000 | |
| | Ընդամենը | 26,5 | | |

Մեկ դրույքը հավասար է 24 ժամ

**Աշխատակազմի քարտուղար՝** [signature] **Վ.Վարդանյան**

Կրթության բաժնի պետ՝ [illegible]

Ֆինանսատնտեսական բաժնի պետ՝ [illegible]

# ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿ

« ՎԵԴՈՒ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՀՈԱԿ 2017Թ.

| Հ/հ | Պաշտոնը | Հաստիքային միավոր | Դրույքաչափ |
|---|---|---|---|
| 1 | Տնօրեն | 1 | 120000 |
| 2 | Հաշվապահ | 1 | 78000 |
| 3 | Գործավար/գրադարանավար | 1 | 73000 |
| 4 | Պահակ տնտեսվար | 1 | 73000 |
| 5 | Հավաքարար | 1,5 | 73000 |
| 6 | Դաշնամուր լարող | 0,5 | 73000 |
| 7 | Մանկավարժներ | 26 | 78000 |
|  | Ընդամենը | 32 |  |

**1 դրույքը հավասար է 24 ժամ**

Աշխատակազմի քարտուղար՝ Վ.Վարդանյան

Ընդհանուր բաժնի պետ՝ [illegible]

Ֆինանսատնտեսական բաժնի պետ՝ [illegible]

# ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿ

«ՎԵԴՈՒ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՄԱՐԶԱԴՊՐՈՑ» ՀՈԱԿ 2017Թ.

| Հ/h | Պաշտոնը | Հաստիքային միավոր | Դրույքաչափ | |
|---|---|---|---|---|
| 1 | Տնօրեն | 1 | 120000 | |
| 2 | Ուսմասվար | 1 | 73000 | |
| 3 | Հաշվապահ | 0,5 | 78000 | |
| 4 | Տնտեսվար | 0,5 | 73000 | |
| 5 | Բուժքույր | 1 | 78000 | |
| 6 | Կազմակերպիչ | 1 | 78000 | |
| 7 | Մարզիչ | 10 | 78000 | |
| 8 | Հավաքարար | 1 | 78000 | |
| 9 | Մարզադաշտի պատասխանատու | 1 | 73000 | |
| 10 | Մարզադաշտի պահակ-բանվոր | 1 | 73000 | |
| 11 | Պահակ | 1 | 73000 | |
| | Ընդամենը | 19 | | |

Կոչումների համար սահմանել հավելավճար հետևյալ չափով՝

1/ Վաստակավոր մարզիչ 15%

1 դրույքը հավասար է 24 ժամ

**Աշխատակազմի քարտուղար՝ Վ.Վարդանյան**

# ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿ

«ՎԵԴՈՒ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏՈՒՆ» ՀՈԱԿ 2017թ

| Հ/հ | Պաշտոնը | Հաստիքային միավոր | Դրույքաչափ | |
|---|---|---|---|---|
| 1 | Տնօրեն | 1 | 120000 | 120000 |
| 2 | Հաշվապահ | 0,5 | 78000 | 39000 |
| 3 | Կազմակերպիչ | 1 | 73000 | 73000 |
| 4 | Գեղմասվար | 1 | 78000 | 78000 |
| 5 | Պարուսույց | 2 | 156000 | 156000 |
| 6 | Ռեժիսոր | 1 | 78000 | 78000 |
| 7 | Խմբավար | 1 | 78000 | 78000 |
| 8 | Պարետ | 0,5 | 73000 | 36500 |
| 9 | Պահակ | 1 | 73000 | 73000 |
| 10 | Հավաքարար | 1 | 73000 | 73000 |
| | Ընդամենը | 10 | | 804500 |

Աշխատակազմի քարտուղար՝ [signature] Վ.Վարդանյան

[illegible]

[illegible]

# ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿ

«ՎԵԴՈՒ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ» ՀՈԱԿ 2017թ.

| Հ/հ | Պաշտոնը | Հաստիքային միավոր | Դրույքաչափ | |
|---|---|---|---|---|
| 1 | Տնօրեն | 1 | 120000 | 120000 |
| 2 | Մանկ.բաժ.վարիչ | 1 | 78000 | 78000 |
| 3 | Հաշվապահ | 1 | 78000 | 78000 |
| 4 | Գրադրանավար | 3,5 | 73000 | 255500 |
| 5 | Գրադրանավար | 0,5 | 78000 | 39000 |
| 6 | Հավաքարար | 1 | 73000 | 73000 |
| | Ընդամենը | 8 | | 643500 |

Աշխատակազմի քարտուղար՝ Վ.Վարդանյան

## ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿ

ՎԵԴՈՒ «ՔԱՂԱՔԱՅԻՆ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ» 2017Թ.

| Հ/հ | Պաշտոնը | Հաստիքային միավոր | Դրույքաչափ | |
|---|---|---|---|---|
| 1 | Տնօրեն | 1 | 130000 | 130000 |
| 2 | Տեղակալ | 1 | 90000 | 90000 |
| 3 | Հաշվապահ | 1 | 85000 | 85000 |
| 4 | Գործավար | 1 | 78000 | 78000 |
| 5 | Բրիգադավար /սեզոնային 9ամիս/ | 1 | 73000 | 73000 |
| 6 | էլեկտրիկ | 1 | 73000 | 73000 |
| 7 | էլեկտրիկ | 1 | 110000 | 110000 |
| 8 | Վարորդ | 1 | 80000 | 80000 |
| 9 | Վարորդ մեխանիզատոր | 1 | 90000 | 90000 |
| 10 | Վարորդ մեխանիկ | 1 | 93000 | 93000 |
| 11 | Հավաքարար | 6 | 73000 | 438000 |
| 12 | Հավաքարար /սեզոնային 9ամիս/ | 6,5 | 73000 | 474500 |
| 13 | շինարար-վարպետ | 1 | 90000 | 90000 |
| 14 | Կանաչապատման բանվոր /սեզոնային 8ամիս/ | 2 | 73000 | 146000 |
| 15 | Ենթավարպետ | 2 | 85000 | 170000 |
| 16 | Բանվոր, կամրջաշինարար /սեզոնային 8ամիս/ | 4 | 75000 | 300000 |
| 17 | Գերեզմանատան տեղամասի պետ | 1 | 78000 | 78000 |
| 18 | Քաղաքային գերեզմանոցի պատասխանատու | 1 | 73000 | 73000 |
| 19 | Պահակ | 1 | 73000 | 73000 |
| | *Ընդամենը* | *34,5* | | *2744500* |
| | | | | |

Աշխատակազմի քարտուղար՝ Վ.Վարդանյան